№ 87 ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 12 — 1900 — ՈՒՐԲԱԹ ՄԱՑԻՍԻ 12 № 87

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ **1900** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բազմամեայ հիմնարկութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մեր պանդուխտները. Հողաբաժանութիւնը գիւղերում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցաւը.

ԲԱԶՄԱՄԵԱՅ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

—

Այս ձմեռը լրացաւ Ներսիսեան դպրոցի գոյութեան եօթանասունհինգամեակը։ Դպրոցի հոգաբարձութիւնը մի քանի տարի սրանից առաջ ձեռնարկեց այդ եօթանասունհինգամեակի պատմութեան կազմելուն։ Պատմութիւնը բաղկացած է երեք հատորից։ Առաջին հատորը լոյս տեսաւ երկու տարի առաջ, երկրորդ հատորը լոյս կը տեսնի շուտով եւ կը մնայ երրորդ հատորը, որ կարող է լոյս տեսնել եկող տարի։ Բացի այդ կազմված է դպրոցի պատմութեան համառօտութիւնը, որ կը բաժանվի դպրոցի տարեկան հանդէսում ներկայ մայիսի 21-ին։

Այդ դպրոցի պատմութիւնը հետաքրքրական է այն կողմից, որ այնտեղ արձանագրած են դռել մեր դպրոցական կեանքի բոլոր լաւ եւ վատ հոսանքները իրանց ընորոշ յատկանիշներով։ Այդտեղ դուք տեսնում էք մանկավարժական կազմի կատարած անդադար փորձերը եւ այն լուսաւոր բացառութիւնները, որ երեւան են եկել ժամանակ առ ժամանակ եւ բարեկարգել կրթական գործը. այդտեղ դուք տեսնում էք այն երկարատեւ մաքառումները, որ տեղի են ունեցել մի կողմից ընտրողական սկզբունքի եւ հոգաբարձութեան դաղափարի պաշտպանների, իսկ միւս կողմից հոգեւոր իշխանութեան անսահման իրաւունքների ներկայացուցիչների մէջ։

Ներսիսեան դպրոցին աջողվել է վերջ ի վերջոյ, խորտակելով զանազան խոչընդոտներ եւ անսպասած ազդեցութիւններ, պահպանել իր գոյութիւնը ընտրողական հոգաբարձական կազմով, ընտրված տեսչով, մանկավարժական ժողովի կանոնաւոր կազմակերպութեամբ եւ մի եւ նոյն ժամանակ ապահով նիւթական դրութեամբ եւ կանոնաւոր տնտեսական գործունէութեամբ։

Որքան եւ խիստ լինէինք մենք մեր քննադատութեան մէջ ընթացիկ կեանքի պայմանների քննութեան ժամանակ, մենք այժմ, երբ աչքի առաջ ունենք այդ հիմնարկութեան գոյութեան երկարամեայ ընթացքը եւ նրան համեմատութեան ենք ենթարկում մեր միւս թեմական դպրոցների հետ, պարտաւոր ենք արձանագրել, որ այդ դպրոցը կատարել է պատմական դեր մեր կրթական գործում եւ ներկայումս գտնվում է համեմատաբար նախանձելի վիճակում, քան նա եղել է նախկին ժամանակներում եւ քան միւս դպրոցներն են։

Դպրոցը այժմ գտնվում է իր խաղաղ եւ կանոնաւոր զարգացման ճանապարհի վրա։ Ցանկանք, որ այն անսպասած եւ վնասակար ազդեցութիւնները, որոնք այնքան քայքայեցին Շուշու եւ Երեւանի թեմական դպրոցների եւ Գէորգեան ճեմարանի կեանքը, չը կարողանան մուտք գործել Ներսիսեան դպրոցի մէջ, որ այժմ միակն է ազատ մնացած անկարգութիւնների եւ երկպառակութիւնների տեսարաններից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Դեռ անցեալ տարի, երբ խօսք կար կանանց համար գիւղատնտեսական բարձր դպրոցներ հիմնելու մասին, մենք յայտնեցինք, որ դա կը լինի մի գեղեցիկ նշան, որ քնքոյշ սեռը միայն սալօնների զարդ, պաճուճանքների մէջ փաթաթված եւ պսպղուն քարերով զարդարված իր չէ, այլ եւ մայր-բնութեան ծոցում աշխատող, երկրի ծննդաբերութեան խնամատար մի մարդ։ Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Մօսկվայում արդէն բացվեցին գիւղատնտեսական կուրսեր յատկապէս կանանց սեռի համար։ «Русскія Вѣд.» լրագիրը այդ առիթով գրում է.

Իր սկզբնաւորութեամբ հաւեստ այս դէպքը արժանի է արձանագրվելու իբրեւ առաջին քայլ այն ճանապարհի վրա, որ տալիս է ռուս կնոջը մասնագիտական կրթութեան մի նոր, մինչեւ այժմ նրան անմատչելի մնացած տեսակ։ Ռուս կինը առաջուց իրան միանգամայն ընդունակ ցոյց տուեց բժշկական, պատմական—լեզուաբանական, ֆիզիքօ-մաթեմատիկական կրթութիւն ստանալու համար։ Կասկած չը կայ, որ նա կը կարողանայ իր ոյժերը ցոյց տալ եւ այս՝ նրա առաջ նոր բացվող ճանապարհի վրա։ Այս ճանապարհը մեր գեղջկուհուն յայտնի է անյիշելի հին ժամանակներից՝ ֆիզիքական աշխատանքի, դաշտում գործելու, անասուններ խնամելու ձեւով. բայց այժմ ռուս կինը կոչվում է մտցնելու այս աշխատութեան մէջ գիտութեան լոյսը, կենդանացնել նրան բնագիտութեան գիւտերով, գործադրել այն կատարելագործութիւնները, որոնք կարող են այդ աշխատութեան աւելի մեծ արդիւնաւորութիւն հաղորդել։ Իրագործելով այն տեղեկութիւնները եւ մեթոդները, որոնք կառաջարկվեն կուրսերում, ռուս կրթված կինը այդ բոլորը ապագայում կը տարածէ Ռուսաստանի բոլոր ծայրերում եւ կը բարելաւէ գիւղատնտեսութիւնը, մեր բազմամիլիոն ժողովրդի կեանքի այս հիմքը։ Ցանկանք ուրեմն, որ երէկ սկված գործը զարգանար եւ ամրանար, որ ռուս կինը այս ասպարէզում էլ հաւատարիմ մնար աշխատանքի եւ պարտականութեան այն ուխտերին, որոնց նա հետեւել է եւ հետեւում է իբրեւ կին-ուսուցչուհի եւ կին-բժիշկ։

Ամբողջ սրտից միանալով յարգելի լրագրի այս ցանկութիւններին, մենք մի եւ նոյն ժամանակ սիրում ենք յուսալ, որ կանանց համար բացված այդ վերին ասպիճանի համակրելի հիմնարկութեան դռներով ներս մտնողը միայն ռուս կինը չի լինի, այլ եւ նրա այն օտարազգի քոյրերը, որոնք ապրում են մի եւ նոյն ընդհանուր հայրենիքում։ Հայ հրապարակախօսի համար այս յոյսը աւելի իրական, արդարացի է երեւում, քանի որ հայ կինը վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում ոչ միայն լցրել է միջնակարգ դպրոցները, այլ եւ դիմել է բարձրագոյն կրթութեան եւ այժմ կին-բժիշկները մեր մէջ շատ հաղուստ չեն։ Դա մի խեղճ մարդ էր, որի վրա ծանրացած էր մի քանի երեխաներ կերակրելու հոգսը. նա ամեն առաւօտ գալիս էր եւ տանում նրանց տան թանի մնացորդը, երեխաներին սպաս պատրաստելու։ Արտասվում էր այդ թշուառ պառաւը իր գուշատ աղջկայ հետ, նրանց թացանն էլ էր կորվել, արտասվում էր եւ՝ Գէվօի կինը, երկու ընտանիքի սուգ էր կատարվում։ Գէվօն նայեց այդ պառաւին եւ իր աղջկան, ապա դարձաւ կնոջը.

—Կնիկ, լուռ, մի լայ, տես, խեղճ պառաւի ցաւը մերից շատ մեծ է, մեր արցունքը Աստուծուն դուր չի գայ. որ մենք էլ արտասվենք, էս խղճալի կնիկը ո՞ր ջուրն ընկնի, ո՞ր կրակն ընկնի։ Մեր գոմում Թավաթն ու Քեալաշը կան դեռ, ինչ ունեն տանն այս ողորմելիները։

Ապա նա շտապով ներս մտաւ տուն, դուրս բերեց այնտեղից մի ման իւղ, դրեց պառաւի առաջ ասելով.

—Ա՛ռ, խեղճ կնիկ, մինչեւ այսօր միայն թան ես տարել, այսօր էլ իւղը տար. թան էլ չը կայ, Աստուած տայ. տար եւ մի արտասվիր, քեզպէսները երբ չարտասվեն, գուցէ ցաւն աշխարհից վերանայ։

Եւ այսպէս ամեն անգամ մի դիակ դուրս ձգելուց յետոյ, Գէվօն ջարդված սրտով վերադառնում էր սաքուն, նստում բուխարու կողքին, սկսում էր կրակը բորբոքել անդադար աթար շարելով վրան, ասես վախենում էր, թէ մի գուցէ յանկարծ օջաղը մարի եւ նրա հետ էլ ծուխը կորվի իր տնից։ Սակայն աթարի կրակն անզօր էր տաքացնել օր աւուր աւելի եւ աւելի ցրտող սաքուն. պարապ գոմում սաքուն ինչպէս տաքանայ։ Գիւղացիք էլ հետզհետէ քիչ էին յաճախում, դէ ինչ անէին խեղճերը, գոմում ցաւ կար, սաքուն էլ տաք չէր։ Միայն խուլ ծերունին էր մի մշտական տեղում նստած, իր անբաժան չիբուխը ձեռքին. կարծես թէ նա մեխված էր եւ անկարող էր հեռանալ եւ միայն գերեզմանը կարող էր խլել նրան բուխարու կողքից։ Երկու ատուերներ լինէին ասես այդ երկու մարդը, մէկը ծերութիւնից եւ միւսը վշտից ջարդված, մէկը խուլ էր ժամանակի երեսից եւ միւսը սիրից։ Նստում էին վառ բուխարու այս ու այն կողմում ժամերով լուռ, նայում էին իրար եւ ծխում, ծխում։ Նրանց վառ չիբուխներից բարձրացող ծուխը ձգվում էր դէպի բուխարին, խառնվում էր կրակի ծխին՝ տանելով իր հետ այնքան մտքեր, այնքան խոհեր, այնքան վշտեր, որքան կարող էր ունենալ մի հին գիւղ, մի ցաւապատ, սգաւոր գիւղ։ Ի՞նչ ասես չը կար այդ ծխի մէջ, դարերի նախապաշարմունքներ, անզօր տգիտութիւն հզօր ճակատագրի հանդէպ, անարատ աղօթք, մրմունջներ եւ մի արտասուելի անտէրութիւն ջախջախիչ չարիքի առաջ։

Գէվօն տանջվում էր մանաւանդ իր սաքուի դատարկութիւնից։ Սաքուն՝ նրա օջաղի փառքը, նրա երկար տարիների իղձերի, աշխատանքի պտուղը, նրա բաղդաւորութեան գոռոզ պատկերը ամայանում, աւերվում էր։ Հարեւանները փախչում էին այնտեղից, ինչպէս դեւերի որջից։ Ժամերով աչքերը դրանը յառած, նա սպասում էր, որ մէկը ներս մտնի, որ սաքուում առաջվայ պէս, այն լաւ օրերի պէս խօսք, ծիծաղ լսվի, որ ամայութիւնը այնպէս հոգի չը հանի, որ սաքուի դատարկութիւնը այնպէս զգալ չը տայ գոմի ամայութիւնը, որ ցաւը այնքան հզօր եւ ինքն այնքան անտէր, անօգնական չը լինի։ Բայց մարդ չը կար ու չը կար, հարեւանները կարծես խօսք մէկ էին արել էլ ոտք չը կոխել այնտեղ, ասես մի մութ դաւադրութիւն կար կազմված այդ անհիւրընկալ դարձած յարկի դէմ։ Գէվօն իր յուսահատ, լցված սրտի դառնութիւնը դուրս էր թափում թունաւոր մտմտոցով։

—Ապերախտներ, ապերախտներ, ինչ է եղել իմ տանը, որ չէք գալիս. մալը կոտորվեց... ինչ անենք, չէ՞ Թաւաթն ու Քեալաշը դեռ ողջ են, նրանց գլուխը որ կենդանի լինի, իմ օջախին ինչ քար կանի։

Ապա նա ցածր էր իջնում եւ դէպի գոմէշները գնում, կանգնում էր մի քիչ հեռու եւ հիացած սիրահարի հայեացքով նայում էր նրանց երկար-երկար, յետոյ մօտենում էր եւ փայփայում նրանց գլուխները, բռնում սուր եղջիւրները, գրկում էր հաստ պարանոցները եւ ձեռքը քսում ըստ իր սովորութեան նրանց մէջքերին։ Կենդանիների հուժկու տեսքը դարձեալ սրտապնդում էր, յոյս էր տալիս նրան եւ Գէվօն մի փոքր հանգստացած, վերադառնում էր, գրաւում իր նախկին տեղը խուլ ծերունու դէմուդէմը, բայց իսկոյն անձնատուր էր լինում մռայլ մտքերի եւ ծխում, ծխում. նրա սիրտն էլ աւելի էր սեւանում, երբ մանաւանդ յիշում էր դրօշակները. քանի այդ չարագուշակ սեւ կտորները չար հրեշտակների պէս շարված են գիւղի շուրջը, նա չէր կարողանում հաւատալ, թէ իր գոմէշները վտանգից դուրս են։ Երբեմն նա գաղտագողի դուրս էր գնում, նայում գիւղի շուրջը, յուսալով՝ թէ չարագուշակ դրօշակները վերցրած կը լինեն։ Նա քայլում էր զգուշութեամբ, որ ոչ ոք չի-

գիւտ չեն։ Պէտք է աւելացնել եւ այն, որ հայ վարժուհիները պակաս անձնազոհութիւն եւ դիմացկանութիւն չեն ցոյց տուել իրանց փչալից ասպարէզներում։ Վերջին տարիներում հայը սկսել է բոլորովին մոռացութեան տալ իր հողը. մնտեսական այն նոր կերպարանքը, որ ստացաւ մեր երկիրը կապիտալիստական խոշոր ձեռնարկութիւնների շնորհիւ, սաստիկ վտանգի ենթարկեց հողագործութեան շահերը. ոչ միայն կրթվածները, մասնագէտները, այլ նոյն իսկ գիւղացին անուշադրութեան մատնեցին հողի գործը, աւելի հեշտ կերպով հարստանալու նպատակով։ Այդ տենդային հոսանքը շարունակվում է եւ պիտի շարունակվի, քանի որ հողագործութիւնը, նահապետական դրութեան մէջ գտնվելով, չէ վարձատրում մշակի դառն աշխատանքը։ Հարկաւոր են շատ պատրաստված ոյժեր՝ այդ դրութիւնը բարւոքելու եւ հողին ու հողագործութեան արժէք հաղորդելու համար։ Գուցէ մեր կանայք, որոնք իրանց ընդունակութիւնները գործադրելու այնքան քիչ ասպարէզ ունեն, կը կարողանան կենդանացնել գիւղատնտեսական գործը, մտցնելով նրա մէջ իրանց ինիցիատիվը, իրանց եռանդն ու գիտութիւնը։ Գուցէ նրանց կայողվի ցոյց տալ տգղամարդկանց, որ ժողովրդի իրական, անկողոպտելի հարստութիւնը հողն է միայն։ Եթէ ռուս լրագիրը կանանց գիւղատնտեսական կրթութեան առհաւատչեայ համարում է այն, որ ռուս կինը վաղուց ծանօթ է աշխատանքի, տնարարութեան, վար ու վաստակի հետ, մինչ հայ կինը չէ կարող ոգեւորվել այդ մի եւ նոյն հանգամանքով։ Զէ՞ որ հայի ընտանեկան կեանքում եթէ կայ մի դարաւոր հաստատուն սիւն, որ պահպանում է ընտանիքի բարօրութիւնը, դա միայն հայուհին է։ Մեր գիւղերում կանայք սովորում են աշխատանքի նոյն իսկ երեխայութիւնից. մի ահագին աշխատանք է դա, որ նոյն իսկ վաղաժամ այլանդակում է գեղջկուհուն։ Զարքաշ անասունի դեր կատարող այդ հերոսուհուց մի քիչ բարձր կանգնած են քաղաքացի արհեստաւոր դասի կանայք, բայց նրանք էլ աշխատաւորներ են, ծանր լուծ կրողներ։ Դրանցից յետոյ գալիս է բուրժուական դասակարգը, ուր կինը արդէն մի կատարեալ ձրիակեր է, իր ամուսնու վաստակած ոսկիները աննպատակ պըչրանքների համար վատնող մի արարած, որի համար այս աշխարհում միայն ուտել—հագնվելը գոյութիւն ունի։ Հարկաւոր է մարդավայել կացութիւն ստեղծել։—Կրթվեցէք, անդադար կրթվեցէք։ Այդ կրթութեան մի ճիւղը ձեզ տանում է քնութեան ծոցը, տալիս է ձեր ձեռքը աշխատելու, գիտութեան միջնորդը հանդիսանալու գեղեցիկ կարողութիւնը։ Մինթէ դա գրաւիչ պատիւ չէ, որ կարող է լիուլի բաւարարութիւն տալ ձեր մարդկային զգացմունքներին...

ՄԵՐ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ

(Նամակ Նոր-Բայազէտից)

—

Ամբողջ Երեւանի նահանգում ոչ մի գաւառ չունի այնքան պանդուխտներ օտարութեան մէջ, որքան մեր տիրահռչակ Գաւառը—Նոր-Բայազէտ։ Ոչ Հին-Նախիջեւանը, որ այնքան յայտնի է իր պանդուխտներով, ոչ Ագուլիսը, Շարուր-Դարալագեազը եւ ոչ մի ուրիշ գաւառներն ու գաւառները չեն տալիս այնքան թիւ պանդուխտների, որքան Նոր-Բայազէտի գաւառը։ Վերջին տարիներս սկսել են պանդխտել նոյն իսկ ընտանիքով, որոնց այս բոպէին կը հանդիպէք Թիֆլիսում, Բաթումում, Բագուում եւ նոյն իսկ Ռուսաստանի խորքերում՝ զանազան պարապմունքների ու ծառայութիւնների մէջ։

Այլ է ընտանիքով պանդխտելը, այլ է ընտանիքը թողնել անխնամ եւ օտարութիւն գընալը։ Նոր-Բայազէտի գաւառում եւ մինչեւ իսկ քաղաքում կան բազմաթիւ անտէր-անտիրական ընտանիքներ եւ նոյն իսկ ջահել կանայք, հարսներ, որոնք դատապարտված են երկար ժամանակով սպասել իրանց տան տղամարդին։ Նրանք դուռն երեսներին, անապահով, սոված փորով եւ աղի արտասուքով՝ աչքը ճանապարհին են պահում տարիներով, որպէս զի իրանց տղամարդը բարեհաճէ կամ օտարութիւնից տուն վերադառնալ, կամ թէ մի քանի մանէթ հայի փող ուղարկել։ Իսկ նրանց այր ամուսինները, որոնք աւելի ազատ եւ ապահով են մնում օտար վայրերում, երբեմն մոռանում են իրանց անխնամ թողած ընտանիքը եւ ընկնում էն քաղաքների անբարոյական կեանքի խորխորատների մէջ։ Մեր պանդուխտները վարժվում են շատ մութ բանների—արբեցութիւն են սովորում, քէֆ-ուրախութիւններ անում, հասարակաց տներ յաճախում, անբուժելի հիւանդութիւններ ստանում եւ այլն։ Եւ ապա, վիներական ախտերով վարակված, մեր պանդուխտները միայն յիշում են գաւառը եւ գիւղը, հայրենի երկրի առողջ կլիման, քաղցր օդն ու ջուրը եւ վերադառնալով տուն՝ վարակում են նաւ ամուսիններին։

Մինչդեռ մեր պանդուխտները քաղաքներում այդպիսի լուսաւոր կեանքով են առաջնորդվում,—նրանց կին-ամուսինները, հայկական ամօթխածութեամբ եւ գաւառական մթնոլորդին վայել սովորութեամբ՝ այրերի բացակայութեան միջոցին՝ իրաւունք չունեն մի որ եւ է տղամարդի հետ անգամ խօսելու։ Եթէ, Աստուած մի արասցէ, այդպիսի մի դէպք պատահի, քամին օդի միջոցով «խաբար» կը տանէ օտարութեան մէջ իրանց երիտասարդական ոյժերը վատնող եւ կեանքը մաշող ամուսիններին, որոնք նախատինքի մի կոյտ կը բերեն թափելու խեղճ կնոջ գլխին։ Աւելորդ է ասել, որ պանդուխտներից շատերը քաղաքներից այլ եւս չեն վերադառնում հայրենիք։ Բայց վերադարձողներն էլ տարիների ընթացքում իրանց աշխատած եւ զանազան ցածր պարապմունքներով վաստակած կօպէկներով մի լաւ զուգվում են, Թիֆլիսի կինոյական շորեր հագնում, արծաթէ հաստ ու ծանր գոտի կապում, ժամացոյց են կախ տալիս, երկարաճիտք չուստեր կամ ճոճուն կօշիկներ են հագնում, եւ մի ձեռք հնամաշ շոր կամ մի անկարել դէրիացու չիթ էլ կնոջ համար են բերում եւ այդպէս տուն գալիս։ Սկզբում նրանք ըստ երեւոյթին հարուստ են երեւում ձեր աչքին։ Տեսնում էք ձեր նախկին հարեւանին, բայց չէք ճանաչում. նա արտաքինով փոխված է ամեն կողմից։ Մաքուր կերպով շրջում է, տան համար ուտելեղէններ, մթերքներ եւ այլ բաներ գնում, ընտանիքը մի քանի օրով լաւ պահում-պահպանում եւ, մի երկու ամիս չանցած՝ բերանը անուշ անելով՝ կրկին դատարկ գրպանով պանդխտութեան ցուպը ձեռքն է առնում եւ հեռանում տեղից... Եւ այսպէս, սովորաբար, անվերջ։

Այժմ Նոր-Բայազէտի որ գիւղը մտնէք, բացի ծերունիներից, մանուկ տղաներից ու կանանցից, ոչ մի երիտասարդ մարդ չէք գտնի. ամբողջ գիւղի փողոցներով շրջելիս միմիայն կանանց խմբերի կը հանդիպէք, որոնք ոտաբոբիկ ցնցոտիների մէջ կոլոլված՝ կժերը շալակներին ջուր են կրում եւ այլ աշխատութիւններ անում։

Պանդխտութեան գլխաւոր պատճառը կայանում է նրանում, որ մի կողմից հողի արդիւնաբերութիւնն է պակասել եւ չէ բաւականացնում տեղական ժողովրդի մնտեսական կարիքներին, իսկ միւս կողմից սակաւահողութիւնն է, որ լիութիւն չէ տալիս ազգաբնակութեան երկրագործական պահանջներին։ Ուստի ոչ մի կողմնակի եկամուտ եւ ապրուստի ուրիշ միջոց չունենալով՝ ամենքը դիմում են պանդխտութեան, հետեւապէս պատճառ են դառնում իրանց ընտանեկան քայքայման՝ ամեն կողմից։

Ի՞նչ միջոցներով կարելի է պանդխտութեան առաջն առնել,—ահա հարցը, որը արժանի է լուրջ ուշադրութեան։

Գ. Սինանեանց

ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂԵՐՈՒՄ

I

Հողաբաժանութիւնը գիւղական միշտ թարմ, կենդանի, հրապարակից չը դուրս եկող հարցերից մէկը եւ ամենագլխաւորն է։ Եւ այդ բնական է, որովհետեւ հայ գիւղերում երկրագործութիւնը գիւղացու եթէ ոչ միակ, վստահութեամբ կարելի է ասել, որ առաջնակարգ պարապմունքն է։

Հողաբաժանութեան հէնց այդ չուտ-չուտ հրապարակ գալը լաւ ապացոյց է, որ նա կանոնաւոր լուծումն չէ ստանում եւ կատարված անարդարութիւնը հիմք է ծառայում հարցի նորից երեւան գալուն. իսկ չուտ-չուտ հողաբաժանութիւն կատարելն այն վնասն ունի, որ գիւղացին հաժոգված չը լինելով թէ այսօրվայ հողը վաղն իրան է պատկանելու, չէ պարարտացնում. մինչդեռ ներկայ ժամանակում, հողի սակաւութեան պատճառով, պարարտացնելը դարձել է անհրաժեշտութիւն։

Այս տարի հողաբաժանութեան հարցը դրված է եւ Շահալու գիւղի համայնքի առջեւ։ Ամբողջ մի տարի հարցը ձգձգվելուց յետոյ, վերջապէս կարելի եղաւ ընտրել երեք հողաբաժանարար՝ երկու գեղեցիկ պայմանով. նախ՝ նշանակված է հողաբաժանարարներին վարձատրութիւն (հաղուագիւտ դէպք), որ մեզ իրաւունք է տալիս աւելի խստապահանջ լինել, եւ երկրորդ՝ հողաբաժանարարները պարտաւոր են գործն աւարտելուց յետոյ իրանց հողերը փոխել ցանկացողների հետ։ Բայց սրանով դեռ ամեն բան չէ վերջանում. մեր հողաբաժանարարները ահագին դժուարութիւնների պիտի հանդիպեն՝ տեղական առանձնայատուկ պայմանների շնորհիւ։

Նախ՝ ամենացաւալին եւ ամեն բան դըժուարացնողը հողի սակաւութիւնն է. գիւղի հողը 900 օրավար է, որ պէտք է բաժանվի 964 հոգու վրա։ Եթէ մտաբերենք, որ մեր օրավարը հաւասար է 4 կոդի, կոդը=4 բուբի, իսկ բուբը=100 քառակուսի սաժէնի, ուրեմն մի օրավարը=1600 քառ. սաժէնի եւ ամեն մի հոգու վրա ընկնում է 1200—1300 քառ. սաժէն կամ կէս դէսիատին, այն ժամանակ հեշտ է երեւակայել, թէ փոքր սխալը կամ անհաւասարութիւնը ինչքան անբաւականութիւններ պիտի ծագեցնէ. գուցէ ուրիշ անգամ գիւղացին բծախնդրութեան չը հասցնէր իր անբաւականութիւնը, բայց այսպիսի սակաւահողութեան դէպքում նա ստիպված է իր հասոյթը հաւասար եւ արդար բաժանած պահանջել, իսկ այնպէս արդար բաժանել, որ ամեն մարդ գոհ ՄԱՅ, այդ իսկապէս անկարելի է, որովհետեւ ամեն մի մարդու ընկնում է մի օրավարից էլ պակաս հող։ Հէնց ընդունենք մի օրավար. այդ հողի վրա նա պէտք է տուն չինէ, բանջարանոց ունենայ, ցանէ ցորեն, գարի, կարտոֆէլ եւ այլն։ Հողի սակաւութիւնն ակներեւ է։ Ի նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հանդը բաժանել մի քանի մասերի, այնպէս որ մի մարդ պէտք է ստանայ չորս հինգ տեղ հողաբաժին, եւ ուրեմն եթէ տրվի ամեն տեղ մի քանի 100 քառակուսի սաժէն, քչութեան պատճառով ոչ մշակելը կարժենայ եւ ոչ յոյս դնել կարելի է, հանդերն էլ յատկութիւններով տարբեր լինելով, դժուար է մէկը միւսով փոխարինել։ Իսկ գիւղացու օրական ապրուստն ապահովելու համար պէտք է աշխատել, որ նա ամեն հանդում հող ունենայ, որովհետեւ բացի հանդի ընդհանուր առանձնայատկութիւնից՝ մի տարի մի հանդի բերքն է լաւ լինում, միւս տարի ուրիշ հանդի բերքը։ Եւ քանի որ ցանքսերն ապահովված չեն կարկտից՝ այդ հանգամանքի վրա էլ պէտք է ուշք դարձնել, որովհետեւ կարկուտն

վում, այլ հացը։

Երկու հսկայ կենդանիները մեռնում էին Գէվօի աչքի առաջ ցաւի ծանրութեան տակ ընկճված եւ նրանց լայն կոկորդներից ու ուռած քթածակերից հառաչանքը դուրս էր գալիս ուժգին փնչոցներով եւ նրանց հաստ պրանոցները ոլորվում էին, եւ նրանց յաղթ մարմինները ցնցվում, գալարվում էին ցաւից։ Ապրելու ցանկութիւնը շատ էր հզօր այդ ճարճատող ոսկորների եւ այդ ձգձգվող, ուժեղ ջղերի մէջ՝ կենդանիները կռւում էին մահվան հետ։

Գէվօն նայում էր ոչնչացման, աւերման այս ահաւոր տեսարանին, որ աւելի եւս ազդու էր դառնում անասունների օրհասական պայքարով. նա նայում էր իր օջախի կործանման այս վերջին գործողութեանը եւ մտածում էր թէ ուր պիտի փնտռել աղբիւրն այս բոլորի։ Դարմանի, փրկութեան յոյս չունէր այլ եւս, չէր աղօթում, այլ մտածում էր եւ կուզէր իմանալ, օ, սաստիկ կուզէր իմանալ, թէ ուր է ծագումը, պատճառը այս ամենակարող չարիքի։ Երկնքին ինչու է հարկաւոր, որ այս երկու բարեբար ոյժերը, այս ապրուստ հայթհայթող գոմէշները մեռնեն, ոչնչանան տանելով իրանց հետ այնքան անմեղ գոյութիւններ։ Գիւղը... գիւղում շատ այսպիսի բաներ է լինում, ցաւն ու վիշտը կայ ու կայ, ինչու գիւղը երկնքի տակ չէ՞... տիեզերքի, աշխարհի մի մասը չէ՞, մինթէ աշխարհի ցաւն ամեն տեղ հաւասար չէ բաշխած, ինչու հապա այդքան շատ է գիւղի բաժինը... Զը լինի թէ գիւղի վերեւ երկինք չը կայ, հապա ինչ է այն կապուտակ անհունութիւնը, մինթէ այն չէ երկինքը։ Խաւար գեղջուկը այս բոլոր հարցերի հանդէպ ոլորում էր իր մտքերը, ողջում իրար վրա ատամները, եւ կատաղած էր, ուռ դէմ...

Երբ երկու հսկայ դիակները վերջապէս ձգվեցին գոմում անշարժ, երբ այնտեղ այլ եւս կենդանի չունչ չը մնաց, այն ժամանակ Գէվօն հեռացաւ, էլ չէր արտասվում, բարձրացաւ սաքուն, մօտեցաւ խուլ ծերունուն, բռնեց նրա ոսկրոտ ուսը, թափով ցնցեց ճչալով!

—Հէյ, էսքան ապրել ես, ասա, ուր է երկինքը։

Ծերը չը հասկացաւ եւ նայում էր ապուշ ապուշ։

—Զը լսեցիր, խուլ ալեւոր, երեւի երկինքն էլ քեզ պէս խուլ է, երկինքն էլ քեզ պէս անզօր, դէ որ էդպէս է, էս օջախն էլ զուր է պլպլում. ես էլ օջախն ինչ անեմ, կրակն ինչ անեմ, էլ ում կը մտնի Գէվօի տունը։ Թող այս ծուխն էլ վերեւ չերթայ, վերեւում էլ բան չը կայ։

Եւ նա մօտի ամանից ջուրը թափեց կրակի վրա եւ մարեց, մինչդեռ խուլ ծերունին նայում էր առանց բան հասկանալու։ Մի առ ժամանակ նրանք մնացին այնպէս նայելով իրար աչքերի մէջ այդ ամայի, ցուրտ գոմի կիսախաւարում, որպէս երկու ոգիներ։

—Ինչու, ասաց կծկված ծերը։

—Էլ սաքու չը կայ, եղաւ պատասխանը։

—Էլ սաքու չը կայ։

—Հա, էլ սաքու չը կայ, էլ օջախ չը կայ։

—Ապա էս ցրտին ես ուր երթամ։

—Գնա այնտեղ, որտեղ երկինք կայ, իմ օջախի վրա էլ երկինք չը կայ, ես էլ օջախ չունեմ, տես...

Եւ նա ձեռքը մեկնեց դէպի գոմի խորքը, ուր պառկած էին երկու անկենդան գոմէշները։ Ծերը երեւի հասկացաւ, թէ բանը ինչումն է, նրա աչքից կրկին երկու կաթիլ արցունքներ վար գլորվեցին, նա վերեւ նայեց, ինչ որ բաներ ասաց, ապա դողդողալով վերկացաւ, չիբուխը գոտում խրեց, անկիւնից գաւազանը վերցրեց եւ երերալով դուրս գնաց այդ անհիւրընկալ, աւերակ դարձած սաքուից։

Ո՞ւր...

Գուցէ դէպի յաւիտենականութիւն՝ հարցնելու համար թէ ուր է երկինքը։

Գէվօն կանգնած նայում էր նրա ետեւից, նայում էր, թէ ինչպէս է հեռանում այդ ջարդված, երերուն մարմինը, որ իր դողդոջուն ոտների հետ տանում էր գուցէ անդառնալի կերպով իր օջախի գոյութեան պատմութիւնը, նրա փառքի եւ անկման անհասկանալի հանելուկը, մութ պատճառները։

Ապա նա ինքն էլ դուրս գնաց, ցուրտ, անբնակ սաքուից, ծածկեց դուռը, վազեց գիւղից դուրս, շտապ-շտապ հաւաքեց սեւ դրօշակները, մի կոյտ կազմեց, կրակ տուեց, նըստեց առաջը։

—Ինձ համար չարի, ուրիշի համար կանեմ, գիւղի համար կանեմ. ինչ որ ես տեսայ, թող թշնամիս չը տեսնի, ասաց նա իր շուրջը հաւաքված գիւղացիներին։

Դրօշակները վառվեցին, իսկ ցաւը...

Ցաւը դեռ կայ։

Սեւ դրօշակների խարոյկի լոյսը չէր կարող ցրել թանձր խաւարը—սեւ տգիտութիւնը դեռ իշխում է այնտեղ։

Ա. Ահարոնեան

Լօզան.

էլ, տարվայ փոփոխական բերքի նման, մի տարի մի կողմի հանդն է փչացնում, ուրիշ տարի մի այլ կողմի։

Պէտք է մեծ նշանակութիւն տալ եւ հողի հեռաւորութեանը, որ գուցէ Շահալու գիւղի համար առանձնայատկութիւն է չնորհիւ իր վատ ճանապարհների. հէնց, օրինակ, անցեալ տարի կային մարդիկ, որ մի քանի օրում բերեցին եւ իրանց կալերում դիզեցին իրանց ամբողջ ունեցածը՝ հողերի մօտիկութեան պատճառով, մինչդեռ միւսները, հողերի հեռաւորութեան պատճառով, դեռ մի օրավարի ցորեն էլ չէին բերել, եւ ահա յուլիսի սարսափելի քամին ցրվեց նրանց հանդի հողերի եղանները (եղան—փոքրիկ դէզ), որոնց միայն կէսը կարելի եղաւ նորից ժողովել։ Սա փաստ է, իսկ այս տեսակ փաստեր եզակի չեն։

Բացի այդ՝ դեռ էլի հանգամանքներ կան. այն հողը, որից այժմ օգտվում է համայնքը, ամբողջովին հող չէ եղել. բոլորին էլ յայտնի, որ այդ հողի մի մասը անտառ է եղել եւ գիւղացիներից ոմանք ձեռնարկել են այդ անտառի մաքրութեանը՝ կարիքից ստիպված, իսկ դա այնքան էլ հեշտ բան չէ. մի կողմից պէտք է եղել տէրութեանը ահագին տուգանքներ վճարել՝ անտառային օրէնքը խախտելու համար, միւս կողմից բաւականանալ սակաւ, նոյն իսկ ծախսերի կէսը չը ծածկող եկամուտով, որովհետեւ անկարելի է լինում մի երկու տարում հողից ծառերը բոլորովին մաքրել իրանց արմատներով. մի ուրիշ կողմից ահագին ժամանակ գործ դնել մշակելու համար, որովհետեւ գութանը վարում է մի ակօս, մէկ էլ յանկարծ դէմ է ընկնում մի ստորերկրեայ արմատի եւ մինչ 12 լուծ լծկանը կը կանգնեցնեա՝ գութանը եօթը տեղից կը կոտրվի. մինչեւ դու նոր գութան կը չինես, հարեւանդ վարեց իր հողերը եւ գործը վերջացրեց։ Այդ դեռ մի հարեւանդ է, մի ուրիշ հարեւանդ իսկի հող վարելու եւ մաքրելու մասին չէ էլ մտածում. նա բոլորովին ուրիշ գործերով է պարապած, արհեստով կամ վաճառականութեամբ, իսկ այժմ այդ ամենքն էլ եկել են եւ քո գլխին կանգնել, թէ մենք էլ բաժին ունենք եւ այն հողը, որտեղ դու քո կեանքդ ես մաշել եւ հազիւ պիտանի դարձրել, պիտի կիսես այդ մեծապատիւ հարեւաններից հետ։

Ահա այսպիսի բարդ հանգամանքների դիմաց ամեն տեղ կանգնած է գիւղացին, մինչդեռ խնդրի լրջութիւնը եւ նրա կենսական նշանակութիւն ունենալը պահանջում են պատրաստի, բանիմաց եւ բարեխիղճ անձնաւորութիւններ։ Հարկաւոր են տեղական հանգամանքներին համապատասխան մշակված ծրագիրներ, հրահանգներ, սկզբունքներ, որոնցով կարելի լինէր ղեկավարվել։ Այդ սկզբունքների պակասութիւնն է, որ աղքատը ստանում է վատ հողաբաժիններ, եւ եթէ նրան վիճակից է եղել մի ծանրակշիռ մարդ, վերջինս ընկնում է գիւղամէջ եւ յանուն աղքատների բողոքում, մինչեւ որ կարիք է դարձնում հողաբաժնութիւնը եւ նա ստանում է մի քանի կոտր լաւ հողեր։ Այդ էր նրա փորայաւը. նա մի կողմ է քաշում, աղքատն էլի մնում է նոյնը։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք ստացանք Բագուից հետեւեալ մխիթարական հեռագիրը. «Նաւթագործների ժողովն ընդունեց բանւորների պարտադիր ապահովութեան ծրագիրը. պէտք է հիմնվի յատուկ դրամարկղ այդ նպատակով. մանրամասնութիւնները առանձին թղթակցութեամբ»։ Այդ որոշումը մեծ համակրութեամբ կընդունվի եւ երկրագործութեան մինիստրութեան կողմից, ուր վերջին տարիներս զբաղված են բանւորների կեանքի բարելաւութեան խնդիրներով։

—

Անդրկովկասեան երկաթուղու, նոյնպէս եւ Պետրովսկ-Դէրբէնդ գծի վնասված լինելու պատճառով նորին մեծութիւն պարսից Շահը չի գնայ այլ եւս Բագու, որպէս ենթադրվում էր ուղեւորութեան նախկին նախագծով, այլ Աղստաֆայից կը գայ Թիֆլիս։ Երեք օր այստեղ մնալուց յետոյ՝ նորին մեծութիւնը կը շարունակէ իր ճանապարհը դէպի Վլադիկավկազ։ Թիֆլիսում Շահի գալստեան սպասում են շաբաթ, մայիսի 13-ին։ Արդէն այն տեղում, ուր Բարեատինսկայա փողոցը միանում է Գոլովինսկի պրոսպէկտի հետ, յաղթական կամար է կառուցվում եւ սկսված են ուրիշ պատրաստութիւններ Շահին ընդունելու համար։

—

Մենք յայտնել էինք, որ պ. Լեւոն Սարգսեան իր հանգուցեալ հօր յիշատակին նուիրել էր Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը 300 րուբլի գիւղատնտեսական հանրամատչելի գրքոյկներ հրատարակելու նպատակով հայերէն լեզուով։ Այժմ կարող ենք հաղորդել, որ ընկերութեան խորհուրդը որոշել է կազմել երեք անձից բաղկացած մի յանձնաժողով՝ այդ գրքոյկները խմբագրելու եւ տպագրելու համար։ Գրքոյկները պէտք է լինեն ոչ աւելի քան $1\frac{1}{2}$ թերթ։ Գրքոյկ կազմողները կը ստանան վարձատրութիւն թերթին 64 րուբլի։ Գրքոյկները կը հրատարակվեն 1200 օրինակ, եւ նրանց գինը կը լինի ոչ աւելի քան 10 կոպէկ։ Գրքոյկների վրա նշանակված կը լինի նուիրողի անունը։ Այդ գրքոյկների հրատարակութեան համար կը պահվի յատուկ հաշիւ, որ պարբերաբար կը հրատարակվի ընկերութեան տարեկան տեղեկագրի մէջ։

—

Վլադիկավկազի ճանապարհից տեղեկութիւն է ստացված, որ այնտեղ, Լարս եւ Կազբէկ կայարանների մէջտեղում, մեծ քանակութեամբ քարեր են թափվել խճուղու վրա եւ արգելել երթեւեկութիւնը. այս պատճառով պօստային եւ ճանապարհորդական կառքերի անցուդարձը ժամանակաւորապէս դադարեցրած էր մայիսի 9-ին եւ 10-ին, ուստի եւ այդ օրերում Ռուսաստանի պօստը չը ստացվեց Թիֆլիսում։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այսօր, ուրբաթ, մայիսի 12-ին, նշանակված է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը, որը պէտք է քննի ընկերութեան եւ նրա ծախքով պահվող այգեգործական դպրոցի նախահաշիւները։ Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։ Կարող են ներկայ լինել եւ կողմնակի անձինք։

—

«Тифл. Листокъ» լրագիրը տեղեկութիւն է ստացել Պետերբուրգից, թէ ներկայ մայիս ամսի կէսին Անդրկովկաս կայցելէ հաղորդակցութեան ճանապարհների մինիստր իշխան Խիլկով։ Պ. մինիստրը Թիֆլիս կը գայ Փոթիի վրայով մայիսի 17-ին, եւ հետեւեալ օրը, մայիսի 18-ին, Վլադիկավկազի ճանապարհով կուղեւորվի հիւսիսային Կովկաս։

—

ԱՐԳԻՆԱՑԻՑ մեզ գրում են. «Ամերիկա գաղթող դուխոբորներից միայն մի մարդ, Վասիլի Գորկով, մնացել էր Շիրակում եւ ապրում էր ժամանակաւորապէս Ղարսխան գիւղում։ Մի քանի օր առաջ նա մեռաւ, եւ թողեց հետեւեալ կտակը. նա կարգադրել էր, որ իր մահվանից յետոյ իր ստացուածքներից կամ կենդանիներից, ում մօտ ինչ որ կը գտնվի, չը պէտք է յետ պահանջել. ով որ մուրհակով եւ կամ ձեռաց պարտական է, ազատվում է այդ պարտքից։ Գորկովը վերջին ժամանակներում տանը հիւանդ պառկած էր, այդ տան մէջ ունեցած իր իրեղէնները եւ թէ առձեռն փող կամ այլ ինչ, բոլորը թողեց այդ տանը։ Վերին աստիճանի պարզ եւ առատ բնաւորութեան տէր մարդ էր, եւ երբէք չէր խնայում օգնելու իրան դիմող չունեւոր ընտանիքներին։ Շատերը այսօր օրհնելով յիշում են հանգուցեալ Գորկովի յիշատակը, մանաւանդ գաղթական հայերը, որ միշտ առատօրէն վայելել էին նրա բարիքը. մի քանի գաղթականներ ընտանիքով ապրում էին նրա տան մէջ»։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻՑ մեզ գրում են մայիսի 10-ից. «Պարսից Շահի համար մօտ 10 օր է, որ պատրաստութիւններ են տեսնում. «Շահի-ճալա» կոչված տեղում, ուր հանգուցեալ Նասր-էդդին Շահը եւս իջեւանել, չինութիւններ են պատրաստվում՝ Դիլիջանի պրիստաւի հսկողութեան ներքոյ։ Շահը պէտք է այստեղ նախաճաշէ։ Նա սպասվում է ամսի 12-ին։ 100 կօզակներ ուղարկված են այստեղ՝ որպէս պատուաւոր պահակախումբ»։

—

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Անիի աւերակների պահպան նոր վանահայր Միքայէլ վարդապետը եռանդուն կերպով աշխատում է փոքր ի շատէ վանքը վայելուչ դիրքի մէջ պահելու, որպէս զի այցելու հիւրերը գոհ մնան։ Բաւական կահկարասիք եւ իրեղէններ է ձեռք բերել, եւ հետզհետէ մասնաւոր կերպով բարեկարգում է։

—

ԱՐԳԻՆԱՑԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրը Ուզունքիլիսա գիւղում ապրող մի քրդի կին, թողնելով իր ամուսնուն եւ երեք հարազատ որդկերանց, փախել էր մի այլ քրդի հետ. կնոջ օրինաւոր մարդը, գիրկն առած իր փոքրիկ ծծկեր երեխայն, որին մայրը անխղճօրէն թողել փախել էր, եկել էր գանգատ տեղական գաւառապետի մօտ, եւ լալով՝ Արգինայի գիւղում ման էր գալիս»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսի «Սուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք. «Վանէն տեղեկութիւն կուտան թէ վերջերս տեղացող անձրեւները գոհացուցիչ են եւ յուսալի է թէ պիտի լեցնեն ձմեռուան ձիւնի պակասը։ Գաւաշի եւ Հայոցձորի մէջ 24 ժամ անընդհատ անձրեւեր է։ Աչնան ցանքերը լաւ են կըսուի, բայց գարնան ցանքը պակաս պիտի ըլլայ, սերմնցու չըլլալուն համար։ Կըսուի թէ Քէշիշկէօլ լեցուած է այս տարի։ Անձրեւի կամ ձիւնի առատութիւնը կամ նուազութիւնը, ինչպէս յայտնի է, գոյութեան խընդիր է գաւառացիներու, մանաւանդ Վանեցիներու համար, ուր երաշտութիւն եւ հունձքերու նուազութիւնը այնքան նեղութեան մատնած են ժողովուրդը։ Ցուսալի է որ գարնան եւ ամռան մէջ աստիճան մը դադրին կարօտութեան աղաղակները, ձմեռը նորէն վերսկսելու համար, եթէ սակայն ամառուընէ չը խորհուի արմատիք հայթայթելու եւ ամբարելու կարեւոր խնդրոյն վրայ»։

—«Արեւելք» լրագիրը հաղորդում է. «Վանայ Նահանգին Պարկիրի գաւառակին մէջ գըտնուած նաւթը տարբալուծուելով հատատուեր է թէ հարիւրին 35 համեմատութեամբ քարիւղ կը պարունակէ եւ հաւասար է Պաքուի քարիւղներուն։ Վանայ մէջ գտնուած այդ քարիւղը Տիգրիսի միջոցաւ Պասրա տարուելով, անկէ Հնդկաստան ու Չին եթէ փոխադրուի, պիտի կրնայ մրցիլ ռուսական քարիւղներուն հետ»։

—«Westminster Gaz.» ուշադրութիւն է դարձնում ռուսաց կառավարութեան ստացած արտօնութեան վրա՝ երկաթուղային գիծ չինելու Կեախտայից մինչեւ Պեկին։ Լրագիրը ռուսաց ազդեցութեան յաղթութիւնը անուանում է «Բրիտանիայի չինական քաղաքականութեան վերջաբան»։ «West. Gaz.»-ի յօդուածը քննադատելով՝ «National Zeitung» լրագիրը ասում է. «1898 եւ 1899 թուերին Անգլիան ամեն կերպ աշխատում էր արգելք դառնալ ռուսական երկաթուղու չինութեան դէպի Պեկին եւ այդ աջողվեց նրան։ Բայց Ռուսաստանը այն ժամանակ ցանկութիւն ունէր գիծ անցկացնել Գիրինից կամ Մունկդէնից եւ կամ Պօրտ-Արտուրի գծի որ եւ է կէտից հարաւ-արեւմտեան ուղղութեամբ։ Անգլիան երեւակայում էր, թէ Ռուսաստանը երբէք չի իրագործի այդ նախագիծը, որովհետեւ ստիպված պէտք է լինի ի նկատի առնել անգլիական contre-նախագիծը եւ բացի դրանից՝ բրիտանական քաղաքական գործիչները հաւատացած էին, թէ «ռուսները բաւականաչափ դրամագլուխ չեն ունենայ այդ տեսակ նախագծեր իրագործելու համար»։ Ի զարմանս անգլիացիների, Ռուսաստանը, բոլորովին անսպասելի կերպով, առաջարկեց Կեախտա-Պեկինի նախագիծը, ընդունելով, հետեւապէս, ոչ հարաւ-արեւմտեան, այլ հարաւ-արեւելեան ուղղութիւնը։ Մենք ենթադրում ենք, ասում է գերմանական լրագիրը, որ Ռուսաստանը երբէք լուրջ կերպով չէ մտածել հարաւ-արեւմտեան գծի մասին եւ, եթէ խօսում էր նրա մասին, դա բացառապէս Մեծ-Բրիտանիայի ուշադրութիւնը այլ կողմ գրաւելու նպատակով էր՝ իր իսկական դիտաւորութիւնը վարագուրելու համար։ Կեախտա-Պեկին գիծը, անշուշտ, աւելի մեծ առաւելութիւններ ունի, քան Գիրին-Պեկին գիծը։ Ամենից կարեւորն այն է, որ պատերազմի դէպքում, այդ երկաթուղին բոլորովին ապահով կը լինի թշնամու թէ ցամաքային զօրքի եւ թէ նաւատորմի յարձակումներից։ Եթէ մինչեւ անգամ անգլիական նաւատորմը ոչնչացնէ Պօրտ-Արտուրը՝ այդ դէպքում եւս ռուսաց զօրքերը կարող են հասնել Պեկին Կեախտայի գծով։ Ամենալուրջ ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ենթադրված գծի վերջանալով՝ Ռուսաստանը, անշուշտ, իշխանական դիրք կը գրաւէ Պէկինում եւ Անգլիայի բողոքները կը մնան անհետեւանք։ «Հիմա կարելի է ասել, շարունակում է «West Gaz.», որ Ռուսաստանը քընած չէր այն ժամանակ, երբ մենք զբաղված էինք հարաւ-աֆրիկական գործերով։ Ցունվարին նա արտօնութիւն ստացաւ երկաթուղի չինել Պարսկաստանում, որ, անկասկած, ապագայում պիտի դնէ Պարսկաստանը Ռուսաստանի տրամադրութեան տակ։ Մեր քաղաքականութիւնը դատապարտված է անգործ եւ խաղաղ մնալու։ Մենք չենք կարող միաժամանակ մի քանի գործ վարել եւ հիմա պէտք է տուժենք կողմնակի ճանապարհով այն բանի համար, որ մեր ուշադրութիւնը նուիրեցինք բացառապէս նախագահ Կրիւգերին»։

—Անգլիական զինուորական «Broad Arrow» ապացուցանում է, թէ Ֆրանսիան պարտական է հեռանալ Իգլից, որ նա գրաւել է վերջին ժամանակ։ «Անգլիայի համար Մարօկկոյի անկախութիւնը, ասում է լրագիրը, անպայման անհրաժեշտ է Միջերկրական ծովում նրա ունեցած դիրքի տեսակէտից։ Ուրիշ ոչ մի պետութիւն չը պէտք է միացնէ Տանժէրը, ապա թէ ոչ մեր տիրապետութիւնը Միջերկրականում անհետ կը վերջանայ։ Գիբրալտարը միայն այն ժամանակ կարող է ծառայել որպէս բանալի այդ ծովի, քանի Մարօկկոյի սուլթանը անկախ միապետ է։ Ցամենայն դէպս Ֆրանսիան պէտք է դուրս գայ Իգլիից, որտեղից յարմար դէքում նա կարող էր աւելի առաջ գնալ։ Ասենք, մինչ այդ ժամանակ հարաւ-աֆրիկական պատերազմը կը վերջանայ եւ Անգլիան կը կարողանայ պաշտպանել իր շահերը»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

10 մայիսի

ԿՐՕՆՇՏԱԴ։ Գերմանական «Լապլանդ» շոգենաւը ընդհարվեց ստորերկրեայ ժայռի Սօմմեր կղզու մօտ։ Շոգենաւի նաւախելը ջրի տակն է։ Օգնութեան համար ուղարկված են ազատարար շոգենաւեր։

ԼՕՆԴՕՆ։ Պրետորիայից հաղորդում են մայիսի 10-ին, թէ տրանսվալեան կառավարութիւնը մտադիր չէ քննադատել անպայման անձնատուր լինելու հարցը, այլ վճռել է շարունակել պատերազմը մինչեւ վերջը։

Կրօնշտադից հաղորդում են, թէ անգլիական հետեւակ զօրքը առաջ է գնում։ Զօրքերի գլխաւոր բանակատեղին կը տարվի աւելի հեռու։ Զօրքի տրամադրութիւնը հիանալի է։ Հիւանդների թիւն այժմ աւելի քիչ է։ Երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնված է։ Թշնամին որոշել է ձգձգել պատերազմը. նրա զօրքը ամրութիւններ է չինում Բենսոստէր գետի մօտ։ Նա ունի թնդանօթներ, որոնց թըւում նաեւ հարիւր ֆունտանոցներ եւ չինվածներ Կրէզոյի գործարանում։ Տրանսվալեան բօէրները պարծենում են, թէ կատաղի դիմադրութիւն ցոյց կը տան եւ կը յաղթեն անգլիացիներին։

Լօրէնցօ-Մարկեզէյից մայիսի 22-ին հաղորդում են, թէ Կրիւգէր իր բոլոր գոյքը փոխել է իր բարեկամների անունը, ի նկատի առնելով այն, որ անգլիացիները կարող են գրաւել նրա գոյքը։

ԼՕՆԴՕՆ։ Գոնինգսպրայտից Բօբերս հաղորդում է, թէ Մեֆկինգն աղատելու ժամանակ թշնամին ենթարկվեց յարձակման եւ բոլորովին ջարդվեց՝ կրելով մեծ կորուստներ։ Անգլիացիներից սպանվեցին 30 եւ վիրաւորվեցին 22 հոգի։ Մեֆկինգից դուրս եկած քաղաքացի զօրքերը՝ միանալով օգնութեան հասած զօրքերի հետ, յարձակվեցին թշնամու գլխաւոր բանակի վրա, ենթարկեցին նրան ռմբակոծութեան եւ դուրս քշեցին դիրքերից. բօէրների զօրաբաժնի հրամատար Մնէյման քիչ էր մնացել, որ գերի ընկնէր։ Անգլիացիները գրաւեցին մի թնդանօթ եւ ահագին քանակութեամբ ռազմամթերք։ Բանակի մէջ գտնվեց 5 սպանված եւ 15 վիրաւորված։ Թշնամին յետ է նահանջում բոլոր կէտերում, բայի մի զօրաբաժնից, որ հանգիստ է պահում իրան։ Գուցէ այդ զօրաբաժինը վարագուրում է միւս զօրաբաժինների նահանջը։ Ապա Բօբերս զեկուցանում է, թէ Համիլտոն գնաց Գէյլբրօն Դէվէտի հետ ունեցած ընդհարումից յետոյ։ Բրոդվուդ գրաւեց 15 սայլ։ Համիլտոն կորցրեց 75 մարդ։

Նիւ-Կէսթլից հաղորդում են, թէ երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնված է։ Նիւ-Կէսթլ եկած մի ագարակատէր պատմում է, թէ Լէնդէնկի մօտ գտնվող բօէրները օգնական զօրք ստացան եւ նրանց թիւն այժմ հասնում է 5,000-ի, բայց եւ այնպէս կասկածում են, որ նրանք կարողանան լուրջ դիմադրութիւն ցոյց տալ անգլիացիներին։

ԼՕՆԴՕՆ։ Լրագիրները յայտնում են, թէ Մակ-Կինլէյի պատասխանը, որ նա տուեց բօէր պատգամաւորներին, դուրս եկաւ այնպէս, որպէս բրիտանական կառավարութիւնը սպասում էր բարեկամ ազգի պետից։

Վերջին ցուցակագրութեամբ բրիտանական զօրքի ընդհանուր կորուստը մինչեւ մայիսի 19-ը հաւասար էր 26,514-ի։ Այս թուի մէջ չեն հաշված բազմաթիւ հիւանդները, որոնք գտնվում են հիւանդանոցներում։

ՆԻԻ-ԻՕՐԿ։ Իբրեւ պատասխան այն հարցին, թէ ճիշդ է արդեօք, որ Տրանսվալը խաղաղութիւն է խնդրում, Կրիւգէր հեռագրեց «World» լրագրին, թէ այդ լուրը ճիշդ չէ։

ՊՐԱԳԱ, «Ռուսան եւ Լիւդմիլա» օպերան մեծ աջողութիւն ունեցաւ։

11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ծառայութեան գործերով զինուորական մինիստրի Պետերբուրգից հեռանալու պատճառով, Բարձրագոյն հրամայված է՝ զինուորական մինիստրի պաշտօնը կատարել գլխաւոր շտաբի հրամանատար գեներալ-լեյտենանտ Սախարովին։

Կ. ՊՕԼԻՍ։ Դեսպանները ժողով գումարելով միջնորդ դատարանի հարցի մասին թիւրքյունական հիւպատոսական պայմանագրի վերաբերմամբ՝ վճռեցին զեկուցանել այդ մասին իրանց կառավարութիւններին եւ հրահանգներ պահանջել։

Ամէրիկական գործերի հաւատարմատարը յանձնեց Բ. Դրանը մի յայտագիր, որի մէջ պնդում է, թէ պէտք է շուտով վճռել վարձատրութեան հարցը, քանի որ վարձատրութիւնը դեռ հայոց խառնակութիւնների ժամանակն էր պահանջվում։

ԳՕՆԻՆԳՍԲՈՐՈՑՏ։ Ֆրէնչ անցաւ Բէնսստէր գետով գէպի հիւսիս-արեւմուտք Գօնինգսբրոյտից։ Այդ շարժումը բօէրներից կը խլի հնարաւորութիւն մնալ այն դիրքի վրա, որ գրաւած ունեն 20 ժամն հեռաւորութեամբ բրիտանական զօրքից։ Վերջին տեղեկութիւնների միտքն այն է, թէ թշնամին ուժեղ միջոցներ ձեռք առաւ զօրեղ դիմադրութիւն ցոյց տալու համար եւ ունէր 15 թնդանօթ։

ԿԻՄԲԵՐԼԷՅ։ Եկաւ Մէֆկինգից մի մարդ եւ հաղորդեց, թէ ճանապարհը ազատ է։ 800 ապստամբներ Ֆրէյբուրգից անձնատուր եղան. անհաշներից մի քանիսը փախան Տրանսվալ։ Ֆրէյբուրգում սաստիկ տարածված է ջերմը, որ անցել է բօէրների բանակից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ուօրրէն գրաւեց Դէլգաս։ Ապստամբների բանակում աւար են առնված շատ մթերքներ եւ ուտեստի պաշարներ։

ՊԷԿԻՆ։ Դիպլոմատիական մարմինը դիմեց Ցզունդ-լի-եամէնին միաբան յայտագրով, որի մէջ խորհուրդ է տալիս կառավարութեանը ճնշել «Մեծ բռունցքի» բռնած թշնամական ընթացքը օտարահպատակների դէմ, որ մեծ չափեր է ընդունել։ Յայտագիրը կտրական լեզուով է գրված եւ սպառնում է, որ եթէ շարժումը չը ճնշվի, օտար պետութիւնների ներկայացուցիչները հարկադրված կը լինեն զինուորական պահակախմբեր բերել Պէկին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 10 մայիսի։ Բօրսա։ Գրաւական թղթեր. Թիֆլիսի կալուածական բանկի 5% արժեթուղթը ծախվում է 98 ր., 4%—90 ր., Քութայիսի կալուածական բանկի 6%—102., 5%—99 ռուբլիով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ծամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րօպէ։

	№ 5 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բաղուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ.	1 ր.	զիշ. 11 ժ.	29 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 »	53 »	եր. 5 »	34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 »	32 »	եր. 6 »	34 »
Բաթում է հասնում	եր. 9 »	1 »	առ. 7 »	14 »

	№ 6 գնացքը:		№ 4 գնացքը:	
Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ.	50 ր.	եր. 7 ժ.	59 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 7 »	15 »	առ. 8 »	42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 »	18 »	» 10 »	05 »
Բաղու է հասնում	ցեր. 12 »	10 «	» 5 »	16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս	զիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կովկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Ն. Շպակովսկի—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլէքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
137—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ
ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ
Հասցէն՝ Красногорская ул. № 14. 22—21

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, թէ նրա դիւանատան մէջ, մայիսի 12-ին, ժամը 12-ին տեղի կունենայ աճուրդ՝ կապալով տալու Ելիզավետինսկայա փողոցի շարունակութեան վրա խճուղի շինելու աշխատանքները՝ սկսած Դիդուբէից մինչեւ գերմանական գաղութը 1000 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը՝ ժամը 9-ից մինչեւ 3-ը։

Ունենալով ամառն ազատ ժամանակ
ՍԱՐԳԻՍ Ո. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
(Дворцовая ул. д. Караджева, номера «Европа» кв. № 9). Աւանդվում է հիմնաւորապէս
ՀԵՇՏԻԳՐԱՀԱՐԹԵԱՆ եւ ԷՔՍԻՖՐԿԱՆ ԹՈՒԷԲՐՆԱՐԹԵԱՆ
լիակատար դասընթացքը։ Տեսնել կարելի է եւ դեկտները ժամը 5-ից մինչեւ 7-ը։
4—10

Բացված է
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
ՏԻԿ. Ե. ՄՈՒՇԵՂԵԱՆՑԻ
(Дворцовая ул. д. Груз. Двор.)
Ընդունվում են՝ լուսանկարչական եւ նկարչական ամեն տեսակ պատուէրներ (մեծացնել, ներկել եւ այլն)։ Պատուէրները կատարվում են նուրբ եւ շատ արագ։ Աշակերտներին եւ զինուորականներին կը լինի զգալի զիջում։ Բաբանմունքներ Ալէքսանդրօպոլում եւ Կարսում։ (ն. ե. հ.) 3—3

ՄՈԶԴՈԿԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

հարկաւոր են երկու քահանայ։ Պաշտօնը յանձն առնել ցանկացողները կարող են պայմանները իմանալ եկեղեցու երէցփոխ պ. Սերովբ Գանջումեանից եւ յայտնել նրան տեղեկութիւններ իրանց ուսման եւ անցեալ գործունէութեան մասին։ Առաջարկվողները պէտք է Ճեմարանի կամ Ներսիսեան դպրանոցի դասընթացքը աւարտած լինեն։ Ընտրվել կարող են նաեւ ուրիշ տեղերից Մոզդոկ տեղափոխվել ցանկացող քահանաները։ 5—5

ԲԱԺՇԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ
(Պետերբուրգից)
Այս ամառ կովկասեան հանքային ջրերում կընդունի հիւանդներ ներքին հիւանդութիւններով։
Հասցէն՝ Ессентуки, д. Безпалова (противъ парка). 5—6

ՀՄՈՒՏ ՀԱՅՈՒԱՊԱՀ

Մոսկվա աւարտած, զանազան մասնաճիւղերի հետ ծանօթ, այստեղ տեղ է որոնում։ Հարցնել՝ Авчальская ул., № 77, бухгалтеру.
(ե. հ.) 2—2

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д Т. Д. З. Банка.
(ր.) 6—20

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է պ.պ. բաժնետէրերին, որ ընկերութեան պայմանագրի § 23-ի համաձայն, մայիսի 24-ին, երեկոյեան ժամի 7-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ,
որի պարապմունքները լինելու են՝
ա) ընկերութեան դրամագլխի աւելացման մասին,
բ) նոր վիշկաներ դնելու մասին,
գ) ընկերութիւնը ակցիոներական ընկերութեան վերածելու կանոնադրութեան՝ մշակման մասին համաձայն ընկ. պայմանագրի § 37-ի։
(12, 20, 24) 1—2

Կալուածները հրդեհից փոխադարձաբար ապահովելու Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը

յայտնում է պ.պ. ապահովագրող անդամներին, որ ապրիլի 30-ին չը կայացած ընդհանուր ժողովի փոխարէն, ընկերութեան կանոնադրութեան 27-րդ յօդուածի հիման վրա, նշանակվում է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ, կիրակի, առաւօտեան 10½ ժ. քաղաքային խորհրդի դահլիճում։ 2—2



ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասսէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԵԼԵՖՕՆ № 642.

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։
ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ
ԳԱԶԱ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրօտէխնիական կառուցումներ և տարքեր, այսինքն հեռագիրների, տելեֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիրքիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։
ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տանկներ։
ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(ե. հ. շ.) 99—100

ԲՓԻԹԿ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Մոսկվայից)
Նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին հանքային ջրերում՝
(ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ)
3—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրեանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
71—100

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու, որ ներկայ տարվայ մայիսի 21-ին, կատարվելու է դպրոցի տարեկան հանդէսը եւ դրա հետ միասին դպրոցի գոյութեան 75-ամեայ յօբելեանը։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31-ի համաձայն, շաբաթ օրը, մայիսի 13-ին, երեկոյեան ժամի 8-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
որի պարապմունքները լինելու են՝ 1) 1899 թ. ապրիլի 13-ի ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։ 2) Վարչութեան եւ խմբագրական մասնաժողովի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը։ 3) 1899 թ. դրամական հաշի ընթերցումը։ 4) 1900 թ. համար կազմած նախահաշի ընթերցումը եւ հաստատութիւնը։ 5) Ա. Պողոսեանի նուիրած գումարի մասին զեկուցում։ 6) Պաշտօնատար անձերի ընտրութիւնը։
Վարչութեան վերջին նիստը նշանակված է մայիսի 13-ին, երեկոյեան ժամի 7-ին եւ այդ նիստին կը լինի այն նոր անդամների ընտրութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին։ 3—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
«ՄԻՋՈՐԴ»
(Посредникъ)
Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ
Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։
Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հաշիւ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կօպ.), որ շատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։
№ 1. 0—30

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Мая 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.